ՉԱԽՄՈՒՍ

Կարսի նահանգի Օլթիի շրջանի Չախմուս գյուղակից, թերևս՝ յայլայից (կիշլագ) ոչ հեռու, այդտեղով անցնող գետակի ափին է գտնվում քառախորան այս եկեղեցին, որը այնքան էլ փոքրերից չէ: Սրա գմբեթի ներքին տրամագիծը անցնում է վեց մետրից, որ երկու մետրով ավելի է Կվետերա և այդ կարգի շատ եկեղեցիների գմբեթների ներքին տրամագծից:

Տեղում պահպանվում է շինության ներքնամասի քարակրաբետոն կմախքը միայն, տեղ-տեղ 2-2.5 մետր բարձրությամբ: Վերջինս այն աստիճան զրկված է եղել արտաքին երեսապատումից, որ դժվարությամբ է ենթարկվել համեմատաբար ճշգրիտ չափագրման:

Կառուցվածքի հիմնական շինանյութը եղել է մեր եկեղեցաշինության մեջ այնքան տարածում գտած կարմրավուն տուֆաքարը և կրաշաղախը: Պատերի երկու երեսների մաքուր տաշված ու շարված քարերի միջև շաղախի հետ լցվել է տուֆաքարի մշակումից առաջացած խճաքարը:

Հուշարձանը չափագրվել է Ե. Թաղաիշվիլու ղեկավարած հնագիտական արշավախմբի գործունեության ընթացքում (1902 թ.), նյութերը հրատարակվել արշավախմբի ղեկավարի կողմից 1909 թվականին.[1] այդտեղ կարդում ենք՝ '«План храма представляет из себя ротонду, к которой примыкают восемь полукруглых нишей, четыре больших и четыре малых»:[2]

Վերոհիշյալից հասկացվում է, որ եկեղեցում գմբեթատակ տարածությունը հիմքում ոչ թե քառակուսի, ինչպես սովորաբար լինում է, այլ բոլորակ է: Այս միաժամանակ նշանակում է, որ գմբեթատակ տարածությունից գմբեթի հիմքի բոլորակին անցնելու համար փոխանցման ոչ մի համակարգ չի գործադրվել՝ դրա կարիքը չի եղել, քանի որ

---

[1] Развалины церкви у деревни Чахмус, под Соломон-Кала. – В кн.: Материалы по археологии Кавказа, собранные экспедициями Московского археологического общества / под ред. и с предисл. Г. Уваровой. Вып. 12: [Христианские памятники Е. Токайшвили. 1902 г.], М., 1909, с. 84-85.

[2] Նույն տեղում:

ստորին ռոտոնդայի վրա բարձրացել է գմբեթի ռոտոնդան: Ըստ երևույթին Ե. Թաղաիշ-վիլին հուշարձանի վերաբերյալ անոտացիան գրելիս հիմնվել է իր տրամադրության տակ եղած, թվում է՝ ոչ ճիշտ հատակագծապատկերին, որտեղ վերակազմողը գմբեթի բոլորակը չի հենել գմբեթակիր, հիմքում ուղղաձիգ կամարներին: Նա այդպիսիք պատկերել է երկկոր եզրագծերով՝ մեծ չափ վերագրելով գմբեթաթմբուկին: Իրականում հայ, ինչպես և վրաց ճարտարապետության շրջանակներում այդպես չի լինում: Պետք է կարծել, որ Չախմուսում գմբեթատակ տարածությունը (ինչպես թելադրում է հատակագիծը) հիմքում անկյունները կտրած քառակուսի է (այդպես էլ բերվում է մեր կողմից): Ահա այդ պարագծերով հատակաձևից գմբեթային բոլորակին անցումը պիտի իրականացված լինի կամ տրոմպներով, կամ առագաստներով, և կամ երկուսի համադրման եղանակով (կապված տաճարի կառուցման ժամանակի հետ):

Նկատի ունենալով, որ Չախմուսում տաճարի կենտրոնական մասի և ավանդատների կապը ստեղծված է ավանատիպ տաճարներում գործադրված սկզբունքով՝ հատուկ խորշերի ձևով, այս հուշարձանը նույնպես պետք է դասել դրանց շարքը: Այդպիսի դասակարգման համար Չախմուսում հիմքեր կան:[3] Ե. Թաղաիշվիլին այդպես էլ վարվում է, գրելով, թե՝ «Сравнивая описываемый храм с другими храмами Кавказа, мы должны заметить, что план его весьма близко подходит к планам церквей Рипсимы в Вагаршапате, Мартвили в Мингрелии и Атенского Сиона в Горийском уезде»:[4]

Տաճարի արտաքինի մասին նույն տեղում կարդում ենք «Снаружи храм выходит многогранником» և ապա «Внешние стены, видимо, были украшены арками. В некоторых местах в углах граней видны остатки двойных колонн, на которые арки опирались»:

Ինչպես հատակագծում տեսնում ենք, տաճարը ամբողջական «բազմանիստ» չէ, ավելի ճիշտ՝ չորս մեծ և չորս փոքր բազմանիստերի խուրձ է: Կասկածի ենք ենթարկում նաև հետազոտողի ենթադրությունը, որ ճակատներով անցած լինի դեկորատիվ սյունակամարաշար: Այդպիսի հատակագիծ ունեցող տաճարի ճակատներում հազիվ թե

[3] Նույն տեղում, էջ 85: Նույնը չենք կարող ասել Դրանդայի վերաբերյալ, նրանում ոչինչ չկա այս տիպի տաճարների շարքը դասելու համար:
[4] Նույն տեղում:

լիակատար սյունակամարաշար ստեղծվի՝ ավանդատների ծավալները խիստ խանգարում են: Նկատենք, որ այդ տիպի տաճարների ճակատներին դեկորատիվ սյունակամարաշարը հատուկ չէ: Կվետերայի դեպքը ասվածին չի հակասում:

Այն, որ տեղ-տեղ երևացել են զույգ սյուների մնացորդներ, թերևս վերագրվի շքամուտքերին: Նկատենք, որ Թաղաիշվիլու հրատարակած հատակագծում տաճարի ամբողջ պարագծով պատերի արտաքին երեսապատման պահպանվածության ոչ մի հետք չի նշմարվում:

Անհետաքրքիր չէ նշել, որ ավելի վաղ՝ դեռևս անցյալ [XIX] դարում Չախմուսի հատակագիծ է հրատարակվել, որը, սակայն, զգալապես տարբերվում է Թաղաիշվիլու հրատարակածից: Սրանցից առաջինում խորանները հիմքում կիսաէլիպսներ են, երկրորդում՝ կիսաշրջաններ: Առաջինում ավանդատները քառակուսիներ են, երկրորդում՝ երկու անկյունները կտրած քառակուսիներ: Առաջինում արևելյան աբսիդն ունի երեք, երկրորդում՝ մեկ պատուհան: Արևելակողմի երկու ավանդատները գնալու համար առաջինում ավանատիպ հուշարձանների օրինակով ստեղծվել են ¾ խորշեր, արևմտյան ավանդատները գնալու համար հիշյալ խորշերի փոխարեն արևմտյան խորանում թողնվել են երկու ոչ լայն բացվածքներ: Հատակագծերից երկրորդում բոլոր չորս ավանդատները գնում են միանման մշակված կիսաշրջան հիմքով խորշերով, որոնց ներքնամասում կան փոքրիկ դռներ: Առաջին հատակագծում խորանների միջև գմբեթատակ տարածությունը հիմքում բոլորակ է, երկրորդում, ինչպես ասվեց՝ անկյունները կտրած քառակուսի: Առաջինում խորանները արտաքուստ արտահայտվում են հնգանիստ, երկրորդում՝ եռանիստ կիսաթմբուկների ձևով: Առաջինում բոլոր կողերի վրա ցույց են տրված սեղանաձև խորշեր, երկրորդում՝ պարզապես անկյուններ, որ վերևից ծածկ չունեն և դրանց խորշեր անվանելը սխալ է: Ինչպես տեսնում ենք, սրանք այնպիսի տարբերություններ են, որ հնարավոր չէ դրանց առկայությունը վերագրել չափագրողներից որևէ մեկի անփորձությանը, հետևաբար այդ հարցը շարունակում է մնալ որպես առեղծված:

Այս եկեղեցու շրջապատում եղել են շատ գերեզմանոցներ. գերզեմանաքարերի վրա եղել են կենդանաքանդակներ, որոնց վերաբերյալ Ե. Թաղաիշվիլին չի մոռանում աշխատության մեջ գրել, բայց ահա չի հիշում, թե այդ քարերի տակ որ ժողովրդի հանգուցյալներ են հանգչում:

«Литературных сведений об этом храме не имеется»,[5] գրում է Ե. Թաղաիշվիլին:



Գծ. 1 *– Չախմուս եկեղեցու հատակագիծը (վերակազմություն՝ Տ. Մարությանի):*

[5] Նույն տեղում:

Գծ. 2 *– Չախմուսի եկեղեցու ճակատ (վերակազմություն՝ Տ. Մարությանի):*